ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

« 26 » ապրիլ 2023թ. No 2088 - Ա

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ», «ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ», «ՍՐՏԻ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ», «ՀԵՄՈԴԻԱԼԻԶԻ ԵՎ ՊԵՐԻՏՈՆԵԱԼ ԴԻԱԼԻԶԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ», «ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ԸՍՏ ՄԱՐԴԱՇՆՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ (COVID-19) ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՎԵՐԱՀՍԿՄԱՆ, ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ/ ԵՆԹԱՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ ԸՆԳՐԿՎԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի N 07-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարարական ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում շահառուներին ծառայություններ մատուցելու վերաբերյալ հրապարակային օֆերտայի պայմանագիր կնքված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը՝ համաձայն N1 հավելվածի,

2) «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում շահառուներին ծառայություններ մատուցելու վերաբերյալ հրապարակային օֆերտայի պայմանագիր կնքված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը ՝ համաձայն N2 հավելվածի,

3) «Սրտի անհետաձգելի վիրահատություններ» միջոցառման շրջանակներում շահառուներին ծառայություններ մատուցելու վերաբերյալ հրապարակային օֆերտայի պայմանագիր կնքված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը՝ համաձայն N3 հավելվածի,

4) «Հեմոդիալիզի և պերիտոնետալ դիալիզի անցկացման ծառայություններ» միջոցառման շրջանակներում շահառուներին ծառայություններ մատուցելու վերաբերյալ հրապարակային օֆերտայի պայմանագիր կնքված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը՝ համաձայն N4 հավելվածի,

5) «Առողջության առաջնային պահպանում» ծրագրի ըստ մարդաշնչի փոխհատուցվող ենթամիջոցառումներով շրջանակներում շահառուներին ծառայություններ մատուցելու վերաբերյալ հրապարակային օֆերտայի պայմանագիր կնքված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը՝ համաձայն N5 հավելվածի,

6) «Կորոնավիրուսային հիվանդության COVID-19-ի» միջոցառման շրջանակներում շահառուներին ծառայություններ մատուցելու վերաբերյալ հրապարակային օֆերտայի

պայմանագիր կնքված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը՝ համաձայն N6 հավելվածի,

7) «Կորոնավիրուսային հիվանդության COVID-19-ի» միջոցառման շրջանակներում պատվաստումներ իրականացնող բուժանձնակազմին լրավճար ստացող կազմակերպությունների ցանկը՝ համաձայն N7 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 8-ի N 07-Ն հրամանը:

3. Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

ապահովել սույն հրամանի տեղադրումն առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ Ահարոն Բարսեղյանին՝

սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածների ցանկերում ընդգրկված կազմակերպությունների հետ աշխատանքները կազմակերպել առողջապահության նախարարի հրամանով հաստատված հրապարակային օֆերտայով կնքվող օրինակելի պայմանագրի դրույթներին համապատասխան:

5. Սահմանել, որ.

1) 2023 թվականի համար սահմանված կարգով պետական պատվերի տեղադրման հայտ ներկայացրած և առողջապահության նախարարության կողմից առողջության առաջնային պահպանման մասով պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բշժկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները համարվում են ներառված «Առողջության առաջնային պահպանման» ծրագրի ըստ մարդաշնչի փոխհատուցվող միջոցառումների/ենթամիջոցառումների հրապարակային օֆերտայի պայմանագրով աշխատող կազմակերպությունների ցանկում: Առողջության առաջնային պահպանման մասով ցանկում չներառված կազմակերպությունների հետ հրապարակային օֆերտայի հիման վրա կնքվող պայմանագրային գործընթացն իրականացվում է ընդհանուր հիմունքներով:

2) «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարարական ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ծառայություններ», «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ», «Սրտի անհետաձգելի վիրահատություններ», «Հեմոդիալիզի և պերիտոնեալ դիալիզի անցկացման ծառայություններ», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում» միջոցառումներով/ենթամիջոցառումներով օֆերտայի պայմանագրով աշխատող կազմակերպությունները երեք աշխատաքային օրվա ընթացքում սույն պայմանագրի դրույթների վերաբերյալ առարկություն չներկայացնելու դեպքում համարվում են ներառված հրապարակային օֆերտայով կնքված պայմանագրով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ՝ Լ. ՆԱՆՈՒՇՅԱՆ

X _____